ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/8241-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-285-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-285-Ն օրենքը 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել, նշյալ նախագծով առաջարկվող կարգավորումները հնարավոր է սահմանել միայն Հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու ճանապարհով:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է նշյալ օրենքի նախագիծը հանել շրջանառությունից և դրանով սահմանված կարգավորումները նախատեսել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծում:

2. Առաջարկվում է փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման դեպքում Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատուկ կարգավորումը կիրառել որոշակի բացառություններով:

Ըստ այդմ նախագծում կատարվել է համապատասխան լրացում նոր՝ 1-ին հոդված լրացնելու միջոցով:

3. Առաջարկվում է շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգերում սահմանափակել միայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի Մ (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեությունների իրականացումը:

Ըստ այդմ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (2-րդ և 7-րդ հոդվածներ):

4. Առաջարկվում է նախագծի հոդվածների համարակալումը վերանայել:

5. Առաջարկվում է նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

1. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող (կատարված) վարչական և իրացման ծախսերի վրա:»:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**